



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ԱԶԳԱՅԻՆ ԿՐԹԱՐԱՆ - ՈՐԲԱՆՈՑ

Ի ԿԻՊՐՈՍ

Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր

Զ. ՏԱՐԵՇԻՋԱՆԻ

(1902 ՄԱՐՏ 1—1903 ՓԵՏՐՈՒԱՐ 28)



ՆԻԿՈՍԻԱ

ԱԶԳԱՅԻՆ ԿՐԹԱՐԱՆ - ՈՐԲԱՆՈՑԻ

1903

362

Ա-23

0120-10

362
4-23

ՍՁԳԱՅԻՆ ԿՐԹԱԲԱՆ - ՈՐԲԱՆՈՑ
Ի ԿՐԳՐԱՍ

370
2462-ՏԵ

Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Բ
Զ. ՏԱՐԵՇՐԶԱՆԻ

(1902 ՄԱՐՏ 1—1903 ՓԵՏՐՈՎԱԿ)

1004
1691



ՆԻԿՈՍԻԱ

ՏՊԱՐԱՆ ՍՁԳԱՅԻՆ ԿՐԹԱԲԱՆ - ՈՐԲԱՆՈՑԻ

1903

ՅԱՌԱՋՍԻՆ

Ազգ. Կրթարան—Որբանոցիս վեցերորդ տարւոյ Տեղեկագիրը կը մատուցանենք այսօր մեր յարգելի ազգայնոց ուշադրութեան, և կը յուսանք որ այս վերջին շրջանի յաջող ընթացքն ալ գոհունակութիւն պիտի պատճառէ մեր աջակիցներուն և բարեկամներուն:

Հետաքրքիր ընթերցողը ներկայ և նախընթաց Տեղեկագիրներու քննութեամբ կրնայ մի գաղափար կազմել Հաստատութեանս վեց տարուան գործունէութեան տեսակին և աստիճանին վրայ: Մեր կարծիքն այն է որ այդ գործունէութիւնը շատ համեստ և սահմանափակ շրջանակի մէջ կատարուած է, սակայն կը ներկայացնէ այնպիսի համաժանցներ որոնք քաջալերական և ուրախառիթ են:

Կրթարան—Որբանոցս տագնապալի ժամանակի մը մէջ և դժուար պարագաներու ներքե հիմնուելով հանդերձ՝ կարողացաւ այսչափ ատեն պահպանել իր գոյութիւնը, սովորական կանոնաւոր ուղղութեան մը վրայ: Թէև առաւելապէս բարեգործական յարկ մը և որբախնամ հաստատութիւն մը՝ յաջողեցաւ օգտակար ծառայութիւն կատարել նաև դաստիարակութեան տեսակէտով. եւթմասնուորի չափ պատանիներ, առաւել կամ նուազ տեղութեամբ կրթու-

եցան այս տեղ, և պատեհութիւն ունեցան ստանալու մայրենի լեզուի բառով զատ՝ օտար լեզուներու և կարևոր գիտութիւններու հմտութիւն, արհեստական վարժութիւններ և բարոյական, քաղաքացիական և քաղաքաւարական հրահանգներ:

Այս դռնն արդիւնքներէն աւելի նշանակութեան արժանի յաջողութիւն կը նկատենք՝ մէկ կողմէ գործին վարչութեան կանոնաւորութիւնը և կիպրոսի բանխմաց ազգայնոց սիրալիր վերաբերութիւնը, և միւս կողմէ՝ հեռաբնակ ազգայնոց կողմէ շարունակուած համակրութիւնն ու վրասահութիւնը, որոնց շնորհիւ հնարաւոր եղաւ, առանց նիւթական անձկութեան յառաջ վարել հաստատութիւնը, և մինչև իսկ գոյացնել պահեստի գումար մը, որ, ինչպէս կը տեսնուի մեր Ընդհանուր Հաշուեկշիւի մէջ՝ ներկայ տարեշնչանէս աւելցած 100 ոսկւոյ հետ այժմ՝ կը հասնի 600 ոսկւոյ գումարին: Արդ, անցեալ վեց տարիներու գոհացուցիչ փորձը և ուրիշ յուսատու երևոյթները նկատողութեան առնելով՝ խնամակալութիւնս կը համարձակի մի նոր քայլ առնել զէպի առաջ:

Մեր նախընթաց Տեղեկագիրներու մէջ յայտնած էինք որ կիպրոսի Որբանոցը հիմնուած է իբր նախաշաւիղ մի բարձրագոյն հաստատութեան, մի քննարկ կը թարգմանի, որ ըստ կարեւորոյն գոհացում տայ ժամանակիս պէտքերուն: Մեր առաջագրութիւնն է այլևս՝ այդ նպատակակէտի ուղղութեամբ ընթանալ — որչափ որ կը ներքն մեր ոյժերը — և ըստ այնմ վերակազմել աշակերտաց ընդունելութեան

պայմանները, ընդարձակել ուսմանց յայտադիրը և առհասարակ բարձրացնել գործին մակարդակը:

Ինքնայայտ է արդէն որ մտադրեալ կը թափան և տընտեսական բարելոխութիւնները կը պահանջեն նաև կարևոր յաւելումներ մեր ելևմտից վրայ, և եթէ ենթադրեալ հասոյթներու մէկ մասը նոր թողալուներու վճարումներէն կ'սպասենք՝ աւելի մեծ մասին համար պէտք ունինք զիմելու զարձեալ հայ հասարակութեան: Եւ այս զիմումը կ'ուզենք ոչ՝ միայն յանուն որբ և որդեգիր սաներու՝ այլ և ի նպաստ պահպանման բարձրագոյն դասարաններու, որոնց մէջ ուսում պիտի ստանան թէ՛ ձրիաւարժ և թէ՛ վճարող աշակերտներ:

Որչափ որ մարդասիրական սլարաք է խնամել և զաստիարակել չբաւոր մանուկները՝ այնչափ ալ սգգայիւն պարտք է հայ կը թութեամբ սնուցանել այն բարեկեցիկ ծնողաց զաւակները, որոնք օտար ուսումնարաններ կը զիմեն, նախնական կամ երկրորդական կը թութեան համար: Այլ ուսումնարաններն ընդհանրապէս իրենց յատուկ նպատակներ և ձգտումներ ալ ունենալով՝ զանազան միտինարութեանց կամ նոյն իսկ պետութեանց նպաստներով պահպանուած են, այնպէս ալ աղբիս իրական շահերը մտածող հեռատես հայերը պարտական են լրջօրէն զբաղելու մեր ապագայ սերնդի կը թութեան կենսական խնդրով, և ազդուապէս ու անմիջապէս նպաստելու ազգային կը թութիւն տարածող ուսումնարաններուն:

Կիպրոսի Որբանոցը մի այդպիսի ուսումնարանի վե-

քաճելու և անոր գործունէութեան սահմանն ընդարձակելու մտքով՝ խնամակալութիւնս վերջացող տարւոյ ընթացքին մէջ զանազան միջոցներ խորհեցաւ. և ի մէջ այլոց՝ պաշտօն տուաւ հաստատութեանս Տեսուչ Պ. Վաչան ֆիւրքճեանին որ ուղևորի զէսի մի քանի հայարնակ կեդրոններ, և ձեռնարկուած գործն ու մտադրուած բարեփոխութիւնները անձամբ ներկայացնէ ձեռնհաս անձանց ու շարութեան:

Ուրախ ենք որ Պ. ֆիւրքճեանի ուղևորութեան հետևանքով ծանօթացանք նաև հեռաքնակ պատուական ազգայիններու արամադրութիւններուն, որոնք քաջալերական են, — կը զօրացնեն մեր հաւատքը՝ գործի նշանակութեան մասին, և մեր յոյսը՝ թէ ի մասոյ պիտի ունենանք մի կեդրոնական գլուստեարան ևս, մերձակայ հայրենի գաւառներու և օտար գաղթալայրերու համար:

Տարակոյս չունինք որ մեր այս յայտարարութիւնը առհասարակ ջերմ խնդակցութեամբ պիտի ողջունուի: Բայց ակնդէտ կ'սպասենք նաև որ գաղափարին համակրողները գործնակաւ՝ կերպով ոյժ տան մեր առաջադրութեան, և հնարաւոր ընեն անոր փութով իրականացումը:

Աւելորդ չէ մի անգամ ևս շեշտել թէ ներկայ պարագայներու ներքև կ'իւրոսի հաստատութիւնը կրնայ ազգային լուսաւորութեան ապագայ վառարաններէն մին լինել, և մինչև անգամ մի փոքր նմոյշը զստեալ Ս. Ղազարու Միտիթարեան հիմնարկութեան, — ինչպէս որ կը փափաքին մեզմէ շատեր — եթէ օժտուի պէտք եղած պայման

ներով: Որչափ ալ հսկայական լինի այդ տիպարը, և որչափ ալ աննշան լինին մեր ոյժերը՝ ներքևի և գովելի է միանգամայն ձգտիլ զէսի այդպիսի մտապատկերմը, և ըստ այնմ կ'իւրոսի հողին վրայ հիմը դնել կրթական և զբոսական նոր կեդրոնի մը:

Սիրելի է յուսալ թէ այս տեսակէսն ալ մեր կարող ազգայնոց մասնաւոր ուշադրութեան և քաջալերութեան կ'արժանանայ:


Յառաջարանս փակելէ առաջ ամենահաճելի պարտք կ'զգանք մեր շնորհակալութիւնները մատուցանելու այն յարգելի անձանց և մարմնոց, որոնք այս տարուան միջոցին ևս նուիրեցին իրենց նիւթական և բարոյական օգնութիւնները: Ծնորհակալութիւն առ Պատուարժան Օժանդակ Մասնաժողովս Փարիզու և Լոնտոնի, առ Պատ. Տնօրէն Խորհուրդն ի Կիպրոս, և առ Պ. Արշակ Զօպանեան ի Փարիզ, որ իր նախաձեռնութեամբ կատարուած երեկոյթին հասոյթը յատկացուց Որբանոցիս: Նոյնպէս, շնորհակալութիւն այն յարգելի պարոններուն որոնք մեր Տեսուչ Պ. ֆիւրքճեանի ուղևորած զանազան քաղաքներուն մէջ իրեն ընծայեցին սիրալիր ընդունելութիւն և մեծապէս դիւրացուցին խնամակալութեանս կողմէ իրեն յանձնուած պաշտօնին գործադրութիւնը:

Պարտաւոր ենք նաև մեր ամենախորին երախտագիտութիւնը մատուցանել առ Ն. Օծութիւնն, Վեհ. Հայրապետն ազգիս, ինչպէս և առ Ն. Ամենապատուութիւնն, Ս. Պատարիարքն Կ. Պոլսոյ, որոնց հովանաւորութիւնը և պաշտ

պանութիւնը վայելած է կրթարան—Որբանոցս առաջին
քրերէն ի վեր:

ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹԻՒՆ ԱԶԳ. ԿՐԹԱՐԱՆ - ՈՐԲԱՆՈՅԻՆ
ՈՐ Ի ԿԻՊՐՈՍ:

Մանչեսթր, 25 Ապրիլ, 1903



ԱԶԳԱՅԻՆ ԿՐԹԱՐԱՆ—ՈՐԲԱՆՈՅ
Ի ԿԻՊՐՈՍ

ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹԻՒՆ

- Ատեկապետ, Մեծ. Տիար Ա. Մ. Ճամկոչեան,
A. M. Jamgochian Esq., Manchester.
- Գանձապահ. Մեծ. Տիար Մարգիս Եղիազարեան,
S. Eliazarian Esq., Manchester.
- Պատոշակալ Բարտոշյար, Մեծ. Տիար Յովհաննէս Ան-
դրէասեան, Հաշտարար դատաւոր,
O. Andreasian Esq., J. P., Man-
chester.

ՏՆՕՐԷՆ ԽՈՐՀՈՒՐԳ Ի ՆԻԿՈՍԻԱ (ԿԻՊՐՈՍ)

- Նախագահ, Արժ. Տ. Պետրոս Վարդապետ Մարաճեան
Առաջնորդ Կիպրոսի:
- Ատեկապետ, Մեծ. Տիար Արիստոլոմ Իւթիւճեան, Առա-
ջին Թարգման Կառավարութեան:
- Ատեկապետ, Մեծ. Տիար Յարութիւն Մելիքեան:
- Գանձապահ, » » Աբղար Կիւլէզեան:
- Տեսուչ, » » Վահան Քիւրքճեան:

Տնօրէն խորհրդին հասցէն է' Direction de l'Or-
phelinat Arménien, Nicosia (Chypre).

ՕԺԱՆԴԱԿ ՄԱՍՆԱԺՈՂՈՎ Ի ԼՈՆՏՈՆ

Ատենապետ, Մեծ. Տիար Ներսէս Ներսէսեան, Դեր
Հիւպատոս Պարսկաստանի,
N. Nersessian Esq. 48 Doughty Street,
Mecklenburgh Square, London, W. C.
Գաւճապահ և Քարտոչդար, Մեծ. Տիար Յ. Կիւլպէնկեան,
H. Gulbenkian Esq., 220 Bishopsgate
Street, Within. London. E. C.

ՕԺԱՆԴԱԿ ՄԱՍՆԱԺՈՂՈՎ Ի ՓԱՐԻՉ

Նախագահ, Արժ. Տէր Վառձապուհ Քահանայ Քիլպարեան:
Ատենապետ, Մեծ. Տիար Կարապետ Բէէլիվանեան,
Monsieur G. Pehlivanian,
39^{bis} Rue de Chateaudun, Paris.
Ատենապետ, Մեծ. Տիար Ա. Կէլրէկ:
Գաւճապահ, Մեծ. Տիար Իգնատիոս Զօրայեան,
4, Rue de Chateaudun.
Մեծ. Տիար Արամ Սէթեան:
Մեծ. Տիար Պօղոս Զրպուրճեան:

ՆՈՐԱԿԱԶՄ ՕԺԱՆԴԱԿ ՄԱՍՆԱԺՈՂՈՎ Ի ՊՈՍԻՈՆ

Նախագահ, Արժ. Տ. Մաշթոց Վարդապետ Փափագեան:
Գաւճապահ, Օր. Ալիս Սթօն Պէքուէլ,
Miss Alice Stone Blackwell,
3, Park St., Boston, Mass.,
Ատենապետ, Մեծ. Տիար Ա. Սիւեան,
21, Bromfield St., Boston, Mass.
Ատենապետ, Մեծ. Տիար Գէորդ Կ. Թուրեան:

**Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր
Վ Ե Յ Ե Ր Ո Ր Դ Յ Ա Ր Ե Շ Ր Զ Ա Ն Ի**

Մեծապատիւ Անդամք Խնամակալութեան
Ազգ. Կրթարան - Որբակոցիկն Կիլպրոսի,
ի Մանչեսթր:

Տեարք,

Պատիւ ունինք Ձեր նկատողութեան ներկայացնելու
Հաստատութեանս վեցերորդ Տեղեկագիրը, որ կ'ամփոփէ
1902 Մարտ 1 Էն մինչև 1903 Փետրուար 28 տևող
տարեշրջանը:

Ո Ի Ս Ա Ն Ո Ղ Ք

Կրթարան - Որբանոցս մի գոհացուցիչ տարեշրջ-
ան ևս բոլորեց իր համեստ Մրազրին համեմատ:
Դասախօսութիւնները կանոնաւորապէս շարունակուեցան,
և ներքին կարգապահութիւնը խանգարող որ և է ղէպը
տեղի չունեցաւ:

Այս տարուան ամառնային արձակուրդին՝ Որբա-
նոցէս մեկնեցան 14 աշակերտներ. մեծ մասամբ չա-
փահաս: Ասոնցմէ հօթն ընթացաւարտ էին, և կըր-
նանք ուրախութեամբ յայտնել որ ամենքն ալ լաւ նախա-

Յրթուրթիւն ստացած էին և ուսմանց զանազան ճիւղերուն մէջ յաջող քննութիւն անցուցին:

Ինչպէս որ յայտնուած էր մեր նախորդ Տեղեկագրի մէջ անդլիերէն լեզուի ուսուցման աւելի զարի տուած էինք մի անդլիացի դասատու եւս նշանակելով: Կիպրոսի զպրօցաց կառավարական ֆիննիչը, Արժ. Ֆրանզ Նիւհամ, մեր աշակերտաց հմտութեան աստիճանին աւելի մօտէն ծանօթանալ փախաքելով՝ հաճեցաւ անձամբ կատարելու անդլիերէնի քննութիւնները, և իր զգացած զոհունակութիւնը հրապարակաւ յայտնելով հանդերձ՝ զրեւական մրցանակներ ալ տուաւ բարձրագոյն նիշերը ստացող երկու աշակերտներու:

Մեր այս տարեշրջանի ընթացաւարտներէն չորսը վերադարձան իրենց եկած տեղերը. մին՝ Ս. Մակարու զպրօցին ուսուցչութեան կոչուեցաւ նախորդին տեղ, որ հայրենիք երթալու համար հրաժարած էր, իսկ միւս երկուքն առայժմ կը մնան այս տեղ, և Որբանոցիս մէջ օգտակար ծառայութիւններ կը կատարեն:

Տարուանս ընթացքին մէջ կատարուած սովորական Ֆրիւ քննութեանց և ընդհանուր դասուց և վարուց աստիճանները կը տեսնուին կցօրդեալ ցուցակին մէջ:

Պատ. Խնամակալութեանց հրահանգին համեմատ Որբանոցիս Տեսչին կատարած ուղեւորութիւնը, որ ամառնային արձակուրդէն սկսեալ մեց ամիսէ աւելի տեւեց՝ բնականաբար զգալի պիտի լինէր աշակերտաց յառաջդիմութեան գործին մէջ, սակայն պարտաւոր ենք ամենայն

զոհունակութեամբ յիշատակելու որ Խորհրդոյս Արժ. Նախագահն իր մշտական հոգածութիւնն ու աշխատութիւնը բազմապատկելով՝ յաջողեցաւ ըստ կարելոյն անգժաւի բնելու Տեսչին բացակայութիւնը: Միւս կողմէ, Որբանոցիս համար Պատ. Խնամակալութեանց առաջադրած բարեփոխութիւններն ի նկատ առնելով նոր աշակերտներու յաւելումը առայժմ յետաձգել պատշաճ համարեցինք:

Այս տարի Որբանոցէս մեկնող աշակերտներու կարգէն էին Ազն. Պետրոս Էֆ. Կարապետեանի երեք սաները, Գաւհիբէն զրկուած, որոնց երկուքը շորս տարի, ու մին՝ երկուք ու կէս տարի խնամուեցան հաստատութեանս մէջ: Շնորհակալութեան արժանի է որ Կարապետեան Էֆէնտին մի ուրիշ որքի աշապականութիւնը ստանձնեց դարձեալ:

Մեր սաներուն մարմնական առողջութեան մասին ալ զոհունակութիւն յայտնելու վիճակին մէջ ենք: Պահ մը քաղաքին մէջ համաճարակի երեոյթ ստացող ժահտատեւոր (թիֆո) Որբանոցս ալ մուտ գտաւ, և աշակերտներէն մին մեծ մտահոգութիւն պատճառեց մեզ: Բարեբաղդաբար զէպքն անխտանգ անցաւ և հիւանդը կատարելապէս առողջացաւ և կազդուրուեցաւ:

Այս առթիւ դարձեալ շնորհակալութիւն կը պատիւնք Որբանոցիս բժիշկ Սեծ. Պ. Թահմիսեանին, այն անշահախնդիւր հոգածութեան և ճարտար խնամոց համար զորս ընծայեց ազգասիրաբար:

Բ Ն Ա Կ Ա Ր Ա Ն

Հաստատութեանս համար ասկէ առաջ վարձուած տունը հին շէնք լինելուն և ուրիշ մի քանի անյարմարութիւններ ալ ունենալուն՝ Որբանոցը առժամայէս փոխադրեցինք Հայոց թաղը գտնուած տուն մը, որ Լատինաց եկեղեցւոյն սեփականութիւնն է: Այս շէնքն ալ, թէն այլևայլ սեռակէտներով առաջինէն նախընտրելի է, բայց պէտք եղած ընդարձակութիւնն ու բաժանումները չունի, և հետեւաբար մի յարմարագոյն շէնքի պէտքը անհրաժեշտ է:

Ինչպէս որ ասկէ առաջ ևս դիտել տուած էինք՝ ամեն կերպով աւելի նպաստաւոր պիտի լինէր Որբանոցիս սեփական մի շէնք կառուցանել, որովհետև քաղաքիս մէջ նպատակայարմար պատրաստ շէնքեր չեն գտնուիր: Տեղական աղիւսէ միայարկ տուն մը, իբր 300 անգլ. ոսկի ծախքով կը կառուցուի. իսկ աւելի հաստատուն և մասամբ քարաշէն տան մը շինութեան համար 5-600 ոսկի բաւական կրնայ համարուիլ:

ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ՃԻՒՂ

Գերձակութեան և կօշկակարութեան վարժութիւնները վարպետներու առաջնորդութեամբ շարունակուեցան տարեշրջանիս առաջին չորս ամիսներուն սէջ միայն: Իսկ արձակուողէն վերջ՝ մինչև հիմա, հարկ չը տեսնուեցաւ մասնաւոր վարպետներու առաջնորդութեան:

Մեր նորահաստատ տպարանին աշխատութեանց մէջ աշակերտաց ոմանք գոհացուցիչ յաջողակութիւն ցոյց կուտան, և կը յուսանք որ ասկէ վերջ տպարանէն հրատարակութիւններ լոյս տեսնեն, և հաստատութիւնս նիւթական կերպով ալ օգտուի:

ԾԱԽՈՒՅ ՀԱՇԻՒՆԵՐ

Վեցերորդ տարեշրջանի ծախքերուն մանրամասնութիւնները նշանակուած են կցորդեալ հաշուեցոյցի մէջ: Ինչպէս որ կը տեսնուի՝ անոնց համադումարն է 301 անգլ. ոսկի, 10 շիլին և 7 բենի, որմէ, յաջորդ տարուան համար մնացած 15 ոսկւոյ չափ արժէքով ուտեստի պաշարը և այլ նիւթերը գեղջելով՝ կ'ունենանք իբր 285 անգլ. ոսկի, վերջին մէկ տարուան մէջ Խորհրդոյս հսկողութեամբ կատարուած ծախուց զուտ գումարը: Հարկ կը համարինք յիշելու որ կիսրոսի մէջ այս տարի ալ շարունակուող երաշտութիւնը զգալապէս բարձրացուցած է ուտելիաց գիները:

ԵՐԱՆՏԱԳԻՏԱԿԱՆ ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆ

Որբանոցիս նոր բարեկամաց շարքին մէջ մասնաւորապէս նշանակելի տեղ կը զբաւէր Պ. Իսահակ ժամհարեանց ի Մոսկուա, որու տարածամ և ողբալի մահը տեղի ունեցաւ երկու ամիս առաջ: Բարեկիշատակ հան-

պուցեալը, իր մարդասիրական օգնութիւններով հանրա-
ծանօթ ամենաջերմ համակրութեամբ վերաբերեալ էր նաև
դէպի մեր դարձը, և անոր ասուելի զարդայման համար
իր նիւթական և բարոյական աջակցութիւնը խոտտացած:

Որբանոցիս կողմէ Պ. Իսահակ ժամհարեանցի յիշատա-
կին յարգանքի պարտականութիւն մը մատուցեալ լինե-
լու համար՝ նորա մահուան փառասունքին առթիւ Հոգե-
հանգստեան պաշտօն կատարուեցաւ քաղաքիս եկեղեցոյն
մէջ, և խորհրդոյս Նախագահը իր քարոզին նիւթ բնորե-
ւով հանդուցեալի օրինակելի բարեգործութիւնները՝ օրհ-
նութեամբ յիշատակեց նորա անունը:

Մնասք խորին յարգանք:

Անդամը Տեօրեկ Խորհրդոյ

ՊԵՏՐՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՍԱՐԱՃԵԱՆ

Նախագահ:

Ա. ԿԻՒՎԷՉԵԱՆ
Գանձապահ:

Ա. ԻԻԹԻՃԵԱՆ
Եանձապահ:

Ա. ՄԵԼԻԲԵԱՆ

Վ. ԲԻԻՐՔՅԵԱՆ

ՆԻԿՈՍԻՍ (Կիպրոս), 28 Փետրուար 1903:



| | ԵՆ. | ԵՆԻ | Ս. Ա. | ԵՆ. | ԵՆԻ |
|---|-----|-----|-------|-----|-----|
| ԲՆԱԿԱՐԱՆՑ | | | 20 | 10 | 9 |
| ԿԱՍԱԳՐԵՐ և ԹՂԹԼԵՂԷՆԵՐ ԷՆ. | | | 3 | 17 | 3 |
| ՈՒՏԵՏՅՈՒ ԵՍԻՔ | | | 142 | 17 | — |
| ԶԱՆԱԶԱՆՔ | | | | | |
| Ը ղ թ ա կ ց ու թ ի ն ք | 2 | 10 | 11 | | |
| Շ ա ռ | 3 | 11 | 8 | | |
| Լ ու ա ք ք, բ ա ղ ի ք, վ ա ռ ա Վ ի ռ ա յ | 2 | 16 | 2 | | |
| Լ ու ա ա ո ղ ո թ թ ե ա ն ք ար ի ղ | 2 | 9 | 9 | | |
| Բ թ ի չ և և ղ և ղ օ ղ ար ք | 5 | 8 | 6 | | |
| Վ ա յ ա և ա ծ ու ի | 5 | 7 | — | | |
| Կ ար ա ի ք ն ն Վ ար ա ն ի, ս ե ղ ա ն ա տ ա ն և խ ու հ ա ն օ յ ի | 5 | 7 | 2 | | |
| Ն օ ղ ղ խ ար ք ն ք, գ ու լ զ ա ն ք և և զ և օ ա թ ի ն ի թ ե ր | 9 | 7 | 4 | | |
| Փ ռ ի ա գ ղ ո թ թ ի ն ք ը ն ա կ ար ա ն և և ն օ ղ օ ղ ու թ ի ն ք | 5 | 2 | 1 | | |
| Փ ռ ի ա գ ղ ո թ թ ի ն ք օ ղ ա ղ և ի ռ ա ա ց | 13 | 3 | | | |
| Ն օ ղ օ ղ ո թ թ ի ն ք ա ն ա կ ա ն ա ա ր կ ա յ ի ց | 1 | 2 | — | | |
| Վ ար ձ ք փ ռ ի ա գ ղ ո թ թ ե ա ն ն ու ի ռ ե ա լ ղ Է Է և ն ն ց և և ա ա ր կ ա յ ի ց | 1 | 15 | 3 | | |
| Ս յ և ա յ ի ք, (պ ա տ ա չ ա կ ա ն ծ ա ա յ ու թ ի ն ք, հ ա կ ա ն ն ի ա կ ա ն ք, ճ ր ա ց, ա ւ ւ լ, լ ու ց ի ի, շ Է, ն ե ղ, կ ա յ ի կ, մ ռ ի ի ր և ն) | 9 | — | 3 | 54 | 11 |
| Ա Ր Է Մ Տ Մ Ա Ն Ո Յ | | | | | |
| Գ և ռ ձ ա կ ո թ թ ի ն — Վ ար ք ա թ ի վ ար ձ ք և հ ա ն ք Ե ռ ձ Է Ն ք: | 12 | 11 | | | |
| Կ օ շ ի ա կ ար ո թ թ ի ն — Վ ար ք ա թ ի վ ար ձ ք և կ ա շ Է Ն ք: | 11 | 10 | 24 | 1 | — |
| Պ Ե Տ Օ Ն Է Ի Յ Թ Ո Շ Մ Ա Ն Ե Ր | | | 49 | 7 | 3 |
| | | | 301 | 10 | 7 |

1000
1610

23 Փետրուար 1902, Նիկոսիա (Կիպրոս):
Վ աս ն ղ ղ ո թ թ ե ա ն ս օ ղ օ ղ ար կ ա յ:

ՊԵՏՐՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՍԱՐԱՃԵԱՆ

Վ. ԲԻԻՐՔՅԵԱՆ Ա. ԿԻՒՎԷՉԵԱՆ Ա. ՄԵԼԻԲԵԱՆ Ա. ԻԻԹԻՃԵԱՆ

Գ Ր Ո Վ Մ Մ Ի Ո

Ո Ւ Ս Ա Ն Ո Ղ Ք

| | ՀԱՅՐԵՆԻՔ | Վ.ԻՃԱԿ | ՄԻՆԷՆԵՐ | |
|--------------------------|------------|-----------|---------|----|
| | | | Ք | Բ |
| ՇՐՋԱՆԱԻԱՐՏ ԿԱՐԳԷՆ | | | | |
| Սրմենակ Սթանասեան . | Ատանա | Չրիավարժ | 84 | 89 |
| Սրմենակ Գրիգորեան . . | Հալէպ | » | 90 | 91 |
| Յովհաննէս Պէրպէրեան . | Քիլիս | » | 97 | 88 |
| Պօղոս Աւերանեան . . . | Մարաշ | » | 96 | 97 |
| Ռափայէլ Փիլիպպոսեան . | Սօղուրուգ | « | 97 | 90 |
| Սիմոն Վանեան | Ակն | » | 86 | 98 |
| Տիգրան Թօփալեան . . . | Կիւրին | » | 99 | 92 |
| Գ. ԿՍՍԱՐԱՆ | | | | |
| Մարտիրոս Պալթանեան . | Սրաբկիր | » | 90 | 92 |
| Մկրտիչ Գարագաշեան . | Սիւրիհիսար | Երթեւեկ | 90 | 86 |
| Մարտիկ Յակոբեան . . . | Նիկոսիա | » | 92 | 91 |
| Միսաք Անուրեան . . . | Մալաթիա | Չրիավարժ | 90 | 78 |
| Սմբատ Աճէմեան | Տիարպէքեր | » | 91 | 86 |
| Տիգրան Սուլթանեան . . | Նիկոսիա | Երթեւեկ | 93 | 88 |
| Մեհտիս Աղաճանեան * | Սրաբկիր | Չրիավարժ | 93 | 80 |
| Խոթեն Նազարէթեան * | Այնթապ | Թողախաուր | 83 | 85 |
| Նազարէթ Տ. Մկրտիչեան* | Կեսարիա | » | 91 | 85 |

* Աստղանիշ ունեցողները կիսաւարտներ են , ամառնային արձակուրդին յետոյ :

ՏՆՕՐԷՆ ԽՈՐՀՐԴՈՅ ԶԵՌՔՈՎ
Ս Տ Ա Յ Ո Ւ Ա Մ Դ Ի Ր Ա Մ Ա Կ Ա Ն Ն Պ Ա Ս Տ Ն Ե Ր

ԳԱՀԻՐԵՆՆ

ԱՄԷ. Ո՛՛ԿԵ ԾԵԼ.

| | | |
|---|----|----|
| Վսեմ. Տիրան փաշա Ապրոյէ, (S. E. Tigrane Pacha d'Abro) | 10 | — |
| Ազն. Պետրոս էֆ. Կարապետեան | 10 | — |
| Բարեսէր ոմն | 5 | — |
| Պատ. Հոգատար ընկերութիւն Որբերու. | 2 | — |
| Տեարք Արեան Եղբարք | 2 | — |
| Տիար Բարթիկ Նահապետեան | 2 | — |
| Տեարք Եագուպեան Եղբարք | 2 | — |
| Յեարք Ճէպէճեան Եղբարք | 3 | — |
| Տիար Յ. Պրուսպեան | 2 | — |
| Տիար Նշաստաճեան | 2 | — |
| Տիար Գրիգոր Գմպեան | 1 | — |
| Տեարք Խաչատուրեան Եղբարք, զեղազորժ, | 1 | — |
| Տիար Տօք. Ն. Գէլէճեան | 1 | — |
| Տիար Ստեփան Խիլիքճեան | 1 | — |
| Տիար Խոսրով Մկրտիչեան | — | 10 |
| Տիար Կ. Գէլչեան | — | 10 |
| Տիար Յ. Գէմճեան | — | 10 |
| Բարեսէր ոմն | — | 10 |
| Բարեսէր ոմն | — | 10 |
| Բարեսէր ոմն | — | 10 |
| Բարեսէր ոմն | — | 10 |

ԱՄԷ. Ո՛՛ԿԵ 46 10

| ՀԱՅՐԵՆԻԻՐ | ՎԻՃԱԿ | ՄԻՋԻՆԻՆԵՐ | |
|------------------------------|------------|-----------|-------|
| | | ՎՄ | ՍՄ |
| Մարզիս Մելիքեան * | Արարկիւր | Թոշակաւոր | 87 82 |
| Տիրան Յովհաննէսեան * | Երզնկա | Զրիաւարժ | 87 88 |
| Բ. ԴԱՍԱՐԱՆ | | | |
| Արքայազամ Զաղասեան | Իլիս | Զրիաւարժ | 92 91 |
| Արամ Շալճեան | Տիարպէքիւր | » | 88 92 |
| Գեղամ Ճիզմէճեան * | Երզնկա | » | 87 78 |
| Վահան Միրանշահեան | Արարկիւր | Թոշակաւոր | 81 86 |
| Վահան Պօղոսեան * | Տիարպէքիւր | » | 88 75 |
| Ա. ԴԱՍԱՐԱՆ | | | |
| Արամ Երէցեան | Սասուն | Զրիաւարժ | 86 87 |
| Գալուստ Մարաշեան | Վանա | » | 84 84 |
| Զաքար Մասիկեան | Անշրի | » | 87 88 |
| Միհրան Տ. Սարգիսեան | Տիարպէքիւր | » | 85 80 |
| Յակօբ Մարաշեան | Վանա | » | 92 90 |
| Յարութիւն Համբարձումեան | Խարբերդ | Երթեւեկ | 83 78 |
| ԸՆՏԵԼԱՐԱՆ | | | |
| Կարապետ Գլըճեան | Նիկոսիա | » | 86 77 |
| Յակօբ Գլըճեան | Տիարպէքիւր | Զրիաւարժ | 82 75 |
| Սեդրաք Ժամկոչեան | Արարկիւր | Թոշակաւոր | 85 79 |

Անդ. Ոսկի ԵԼ. ԲԵՆԷ
Փոխադրեալ 16 10 —

Եզրապահան 402. 022

| | |
|------------------------------|----|
| Աճ. Տ. Մամբրէ բահ. վարդանեան | 77 |
| Տիար Գաննիկ Երուսեան | 80 |
| Տիար Յ. Տիրատուր | 60 |
| Տեարք Շահրոզեան Եզրաբք. | 60 |
| Տիար Յարութիւն Յարութիւնեան | 50 |
| Տիար Տ. Եպիփանեան | 30 |
| Տիար Մկրտիչ Պալլազեան | 40 |
| Բարեսէր ոմն | 40 |
| Տիար Սարգիս Պիւպիւլեան | 46 |
| Տիար Վառճապուհ Մերոբեան | 40 |
| Տիար Յ. Դալլազեան | 30 |
| Բարեսէր ոմն. | 20 |
| Տիար Հանի Թորոսեան. | 20 |
| Տիար Միրան | 20 |
| Տիար Միհրան Ճիվանեան | 20 |
| Տիար Տ. Զօհրապեան | 20 |
| Տիար Տիգրան Վարդերեան | 20 |

687

ԱՆԵՐՍԱՆԴՐԻԱՅԻՆ

| | |
|-------------------|----|
| Ան. Զ. Սըվադի Պէյ | 50 |
| Տիար Գ. Զպարճեան | 50 |

Եզ. 022 402. 787 8 1 4

Դումար Ա. Ո. 54 11 4

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՅ. ԿԱՀԱՆԳՆԵՐԻՆ

Անդ. Ոսկի ԵԼ. ԲԵՆԷ
Փոխադրի 54 11 4

| | |
|---------------------------------------|-------|
| Գեր. Յովսէփ Եպիսկ. Սարաճեանի շնորհիւ, | |
| Տիար Խաչիկ Թորոսեանի հարսանեաց առ. | |
| Թիւ երկրորդ անգամ գոյացած. | 3 5 3 |
| Պոստոնէն Տիար Ա. Սելեանի շնորհիւ, | |
| Տիար Նշան Տէմուրճեանի հարսանեաց առ. | |
| Թիւ գոյացած | Տարբ |
| Տիար Յովհաննէս Տօնիկեան. | 10 |
| Հեռեկաք մէկ մէկ տողարէն | 10 |
| Տիար Առաքել Մկրտիչեան | |
| » Ս. Զաքարեան | |
| » Պօղոս Վարդանեան | |
| » Մելքոն Նորոսեան | |
| » Պետրոս Մալխասեան | |
| » Տիգրան Շահինեան | |
| » Յովհաննէս Պօղոսեան | |
| » Յարութիւն Խաչմիսեան | |
| » Պօղոս Հալէպեան | |
| » Նշան Տէմուրճեան | |

Տարբ 20

Որ է Անդ. Ոսկի 4 1 7

ՕՄՏՈՒՐՄԱՆԷՆ (Սուլաան)

| | |
|---------------------|---|
| Տիար Սուրբառ Վանեան | 3 |
|---------------------|---|

Անդ. Ոսկի 64 18 2

ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆԻ Ի ՄԱՐՍԷՅԷ

| | Ֆրանք |
|---|-------|
| Տիար Թովհաննէս Մանուկեան | 50 |
| Բարեյիշատակ Տիար Թովհաննէս Կիւմշեան | 50 |
| Տիար Թակոբ Սելեան | 50 |
| Տիար Միհրան Թէքէեան | 50 |
| Տիար Գրիգոր Հայրումեան | 25 |
| Տիար Գալուստ Համբարձումեան | 20 |
| Տիար Սարգիս Հ. Կիւմշեան | 20 |

Ֆրանք 265

Որ է Անգլ. Ոսկի 10. 9. 8.

ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆԻ Ի ՓԱՐԻՉ

ՇՆՈՐԶԻՒ ՊԱՏ. ՕԺԱՆԴԱԿ ՄԱՍՆԱԺՈՂՈՎՈՅՆ ՓԱՐԻՉՈՒ

| | Ֆրանք |
|---|-------|
| Սրժ. Տ. Վասմշապուհ Զնյ. Բիսպարեան | 20.— |
| Պատ. Հայկազեան Ուսումնասիրաց Ընկ. | 500.— |
| Տիկին Ե. Թակոբեան Փաշա | 250.— |
| » Ս. Գ. Գէլէկեան | 200.— |
| » Լեան պէլ Գաբամանեան | 200.— |
| » Տ. Էզնայեան | 30.— |
| Տիար Ա. Էզնայեան | 200.— |
| » Թակոբ Ասլանկիւ | 120.— |
| Տեարք Թընկըբ Եղբարբ | 100.— |
| » Զօրայեան Եղբարբ | 100.— |
| » Խ. Ներսէսեան | 100.— |

Ֆրանք. . 4820.—

| | Ֆրանք | 1820.— |
|---|----------|---------------|
| Տիար Թ. Իսկէնաէր | Փօխաղրի, | Ֆրանք. 1820.— |
| » Ս. Սլաճեան | | 100.— |
| » Կ. Բէհլիւլեան | | 100.— |
| » Ռ. Մարկոսեան | | 100.— |
| Տեարք Սամուէլեան Եղբարբ | | 50.— |
| Տիար Արամ Սեթեան | | 50.— |
| » Տիգրան Խան Գէլէկեան | | 50.— |
| » Տօքթ. Սբբեան | | 50.— |
| » Թադւօր Գարալէօզեան | | 50.— |
| » Ա. Միքայէլեան | | 50.— |
| » Տիրան Գէմհանեան | | 50.— |
| » Խաչիկ Խան Սարամանո (Դաւրէժ) | | 50.— |
| Տեարք Բուճեան Եղբարբ | | 30.— |
| » Տօղրամանեան և Կէլրէկ | | 30.— |
| Տիար Միհրան Սլաճեան | | 30.— |
| » Մկրտիչ Ճանճեան | | 25.— |
| » Ս. Աճեան | | 20.— |
| » Ճաշնուս Ասլանկիւ | | 20.— |
| » Մ. Թալալիսեան | | 20.— |
| » ՈՃ | | 20.— |
| » Մ. Սարբեան (Անդէրո) | | 20.— |
| » Մարտիկ Մինասեան | | 20.— |
| » Խաչիկ Հիւնքեարայէլեանեան | | 20.— |

Ֆրանք. . 2875.—

| | | Ֆրանք |
|------|-----------------------------------|---------|
| | Փոխադրի, Ֆրանք. | 2875.— |
| Տիար | Արամ ձեվահիրճեան | 20.— |
| » | Ա. Կիւրճեան | 20.— |
| » | Օննիկ Գալպանեան | 20.— |
| » | Անթուան Պրիմ. | 20.— |
| » | Տաքթար Մ. Գէմէանեան | 20.— |
| » | Պողոս Չրպուրճեան. | 10.— |
| » | Ա. Գաֆաֆեան | 10.— |
| » | Լեոն ձեվահիրճեան | 10.— |
| » | Ա. Զօպանեանի նախաձեռնութեամբ | |
| » | արուած երեկոյթէն հասոյթ | 665.15 |
| » | Թ. Իսիկեանէրէ նուէր (ունեցած Վէկ | |
| | դատէն շահած տուգանք). | 100.— |
| | Ֆրանք. | 3690.15 |
| | Որ է Անգլ. Ոսկի 145 14 6 | |

ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆՔ Ի ԼՈՆՏՈՆ

| | | Անգլ. Ոսկի Շէլ. |
|-------|---|-----------------|
| Վսեմ. | Մկրտիչ Էֆ. Էսսեան | 5 — |
| Տեարք | Գ և Կ. Կիւպէնկեան և Ընկ. | 5 — |
| Տիար | Թ. Զիգիանեանց | 3 — |
| Տիար | Ա. Գ. Կիւպէնկեան, Աղեքսանդրիա | 3 — |
| Տիար | Տ. Արսլանեան | 1 — |
| Տեարք | Էսէֆեան Եղբարք | 1 — |
| | Անգլ. Ոսկի 18 — | |

| | | Անգլ. Ոսկի Շէլ. |
|------|-------------------------|-----------------|
| | Փոխադրի. 18 — | |
| Տիար | Թ. Սօրկուճ. | 1 — |
| » | Թ. Կիւպէնկեան | 1 — |
| » | ՈՏ. | 5 — |
| | Անգլ. Ոսկի 20 — | 5 — |

ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆՔ Ի ՄԱՆՉԵՍՔ

| | | Անգլ. Ոսկի Շէլ. |
|-------|----------------------------------|-----------------|
| Տեարք | Թօրալեան Եղբարք | 10 — |
| » | Աբապեան Եղբարք | 10 — |
| Տիար | Գաոնիկ Ֆընտըքեան | 10 — |
| » | Ժամկոչեան | 7 10 |
| » | Մարանեան | 7 — |
| » | Ա. Իբրիքճեան. | 7 — |
| » | Ս. Սպարթալը, 2 տարուան | 6 — |
| » | Կրօնիկ Բարազեան | 6 — |
| » | Սարգիս Գալոմճեան | 6 — |
| Տեարք | Ալեանաքեան և Ընկ. 2 տարուան | 6 — |
| Տիար | Ֆրէնկեան. | 5 — |
| » | Մարտիրոս Թոքատեան | 5 — |
| » | Կ. Թ. Պատմանեան. | 5 — |
| » | Ս. Եղիազարեան | 5 — |
| » | Մ. Մանուկեան | 5 — |
| » | Սիւլվէան | 5 — |
| | 105 10 | |

| Փոխադրի . | Անգլ. Ոսկի Շեշ. | |
|---------------------------------------|-----------------|----|
| | 103 | 10 |
| Տեւրբ Գնանեան որդիք | 5 | — |
| » Ս. Մանուկեան Որդիք | 5 | — |
| Տեւրբ Ս. Եւտրզճեան | 5 | — |
| » Յովհ. Անդրէասեան | 5 | — |
| Տեւրբ Պ. Գրիգորիսեան և Բեկ | 5 | — |
| Տեւրբ Ա. Քարակէօզեան | 5 | — |
| Տեւրբ Տիգրան Մուրատեան | 5 | — |
| » Ճիվան Մանուկեան | 5 | — |
| » Մ. Ազնաւորեան | 4 | — |
| » Գէորգ Եսայեան | 3 | — |
| Տեւրբ Քոչումճեան Եղբորորդիք | 3 | — |
| Տեւրբ Իբրանոսեան | 3 | — |
| » Աւեանաք | 3 | — |
| » Թասլաքճեան | 3 | — |
| Տեւրբ Աստարճեան Եղբարք | 3 | — |
| » Յ. Բարազեան և Որդիք | 3 | — |
| » Գէորգ Մուրատեանի Որդիք | 3 | — |
| Տեւրբ Մինաս Պապեան | 2 | 10 |
| » Թօհաֆճեան | 2 | — |
| » Քամպէրեան | 2 | — |
| » Չաքըրեան | 2 | — |
| » Տամատեան | 2 | — |
| Տեւրբ Յակօբեան և Որդիք | 2 | — |

Անգլ. Ոսկի 186 —

| | | Անգլ. Ոսկի Շեշ. | |
|-------|----------------------------|-----------------|---|
| | | Փոխադրի 186 | |
| Տեւրբ | Միհրան Մուրատեան | 2 | — |
| » | Նաչապետեան | 2 | — |
| » | Ստամբուլուեան | 2 | — |
| » | Գօրասանճեան | 1 | — |
| » | Կ. Օտապաշեան | 1 | — |
| » | Չըպուքճեան | 1 | — |
| » | Պ. Կիւլէսէրեան | 1 | — |
| Տեւրբ | Արշաւի Եղբարք | 1 | — |
| Տեւրբ | Չենոբեան | — | 3 |
| | | Անգլ. Ոսկի 197 | |
| | | 3 | |



ԱՅՆ ԵՒ ԱՅՆ ՆՈՒԷՐՆԵՐ

ՄԵՆ. Կ. ԿԻՒԼՊԷՆԿԵԱՆ, ԼՈՆՏՈՆ.

Մէկ սնտուկ թէյ:

ՄԵՆ. Յ. ԱՆԴՐԷԱՍԵԱՆ, ՄԱՆՉԵՍԹԵՐ,

Մէկ օրինակ «Յուցակ հայերէն ձեռագրաց վիճենայի»:

և 20 օրինակ այլևայլ գրքեր և գրքոյներ:

ՄԵՆ. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՊԱԼԵԱՆ, ԲՈՍՏՈՎ,

Տարեկան Բազմավեց հանդէս և Գեղունի:

ՄԵՆ. Ս. ԵՂԻԱԶԱՐԵԱՆ, ՄԱՆՉԵՍԹԵՐ,

Տարեկան Հանդէս Ամսօրնայ:

ՄԵՆ. Ա. ԺԱՄԿՈՉԵԱՆ, ՄԱՆՉԵՍԹԵՐ,

Տարեկան Պատանի:

ՄԵՆ Թ. ԻՍԿԷՆՏԷՐ, ՓԱՐԻԶ,

Երկու օր. Անահիտ:

ՄԵՆ. ԲԺ. Ա. ԲՈՒԴՈՒՂԵԱՆ, Ս. ԲԵԴՐՊՊՈՒՐԿ,

Իր հեղինակած գործերէն 18 օրինակ:

ՄԵՆ. Կ. Յ. ԲԱՍՄԱՃԵԱՆ, ՓԱՐԻԶ,

Տարեկան Բանասեր:

ՄԵՆ. ՉԱՔԱՐԻԱ ԳՐԻԳՈՐԵԱՆՅ, ԹԻՖԼԻՍ,

Հայկական տպագրութիւն «Լէօ»ի, երկու հատոր,
և օւրիշ գրքեր:

ՊԱՏ. ԽՄԱԲԱԳՐՈՒԹԻԻՆ «ԲԻՒՐԱԿՆ» ՀԱՆԴԷՍԻ,

Տարեկան Բիւրակ:

ՄԵՆ. Մ. ՄԻՆԱՍԵԱՆ, ԳԷՄՊՐԻՃ, ԱՄԵՐԻԿԱ,

Տարեկան Լոյս:

ԻՇԵԱՆՈՒՀԻ ՄԱՐԻԱՄ ԹՈՒՄԱՆԵԱՆ, ԹԻՖԼԻՍ,

Երկու տուփ Նոր Այբբենաբան, քարթնէ խորանարդ-
ներու վրայ:

ՄԵՆ. ԲԺ. Ս. ՇՈՂՆԱԶԱՐԵԱՆ, ՄՈՍԿՈՒԱ,

Իր աշխատութիւններէն 4 օրինակ:

ՊԱՏ. ԽՄԱԲԱԳՐՈՒԹԻԻՆ «ԾԱՂԻԿ» ՇԱՐԱԹԱԹԵՐԹԻ,

Տարեկան Ծաղիկ:

ՊԱՏ. ԽՄԱԲԱԳՐՈՒԹԻԻՆ «ՄՈՒՐՃ» ՀԱՆԴԷՍԻ,

Արմանսք քաղաքի Յ. Դարախեանի յիշատակին
Մէկ օր. Մորթ:

ՄԵՆ. Մ. ՉԵՐԱԶ, ՓԱՐԻԶ,

Մէկ օր. Արմենիա Լինչի:

ՄԵՆ. Ա. ՉՕՊՈՆԵԱՆ, ՓԱՐԻԶ,

Չորս օր. Մատենադարան Անահիտէն:

ՊԱՏ. ԽՄԱԲԱԳՐՈՒԹԻԻՆ «ՄՇԱԿ»Ի,

Մէկ օր. Մշակ լրագիր:

ՄԵՆ. ՍԻՄՈՆ ՍԱՐԳՍԵԱՆ, ԱՍԻՈՒԹ,

Մէկ օր. Ատենիս:

ՄԵՆ. ՈՄՆ Ի ԳՈՂԻՐԷ:

Երկու օր. Ժողովուրդ Հանդէս:

ՄԵՆ. Ս. ԴԱՐԲԻՆԵԱՆ, ԳՈՂԻՐԷ,

Մէկ քիօ տպագրութեան զանի սոսինձ:

ՄԵՆ. ԱՐՄԵՆԱԿ ԱԶԱՏԵԱՆ, ԳՈՂԻՐԷ,

Մէկ օր. Յոյրեր, Սեպիւն:

ՄԵՆ. ՆՇԱՆ ԿՈՐԿՈՏԵԱՆ, ԳՈՂԻՐԷ

Մէկ օր. Ճամբորդութիւն տպագրութիւններ
ի Ջաշիցերիս:

ԱՐԺ. ՊԵՏՐՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՍԱՐԱՃԵԱՆ, ՆԻԿՈՍԻԱ,

Տարեկան Արեւելեան Մամուլ:

ՆՈՅՆ.

Չասկի առթիւ մէկ գառնուկ, և իր անուան տօնին
առթիւ Որբանոցին աշակերտներուն հացիբրդով:

ՏԻԿԻՆ Ա. ԻԻԹԻՎՃԵԱՆ, ՆԻԿՈՍԻԱ,

Կաղանդի առթիւ մրդեղէններ: Չասկին՝ մէկ գառնուկ:

ՄԵՆ. Ա. ԿԻԻՎԼՉԵԱՆ, ՆԻԿՈՍԻԱ,

Մէկ բն ծիրան:

ՏԷՐ ԵՆ ՏԻԿԻՆ Գ. ՍՈՒԼԹԱՆԵԱՆ, ՆԻԿՈՍԻԱ,

Մասնաւոր հացիբրդով: Կաղանդին՝ անուշեղէններ:

ՄԵԾ. ԽՈՍՐՈՎ, ՄԵՏՄԹՈՆ

Մէկ օր. Ծիրանի Արեւելոր:

ՄԵԾ. ՈՄՆ, ԱՅՅԵԼՈՒ Ի ՆԻԿՈՍԻԱ,

Հացկերոյթ մը տուաւ Որբանոցի աշակերտաց:

Դարձեալ, նուիրեց մէկ թիթեղ քարիւղ:


ՄԵԾ. ՏՕՆԱՊԵՏ ԹՈՄԱՃԱՆՆԵԱՆ, ՉԻԳԱԿՈՅ,

Կաղանդին՝ իր ծախքով մրգեղէններ բաշխել տուաւ
աշակերտաց:

ՄԵԾ. ԳԱՍՊԱՐ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ, (նախկին աշակերտ

Կրթարան-Որբանոցի) ՆԻԿՈՍԻԱ,

Նուիրեց մէկ գառնուկ:



ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՇՈՒԵԿՇԻՌ

1 ՄԱՐՏ 1902

ՄՈՒՏԻ

| | Ա. Ո. | ՇԵՆ. | ԲՆԵՒ |
|--|-------|------|------|
| Հատնախորդ Հաշուեկշռի Տնօրէն Խորհրդոյ ձեռք գտնուած կշիռը | 24 | 7 | 9 |
| Հատնախորդ Հաշուեկշռի Գանձապահ Տխար Եղիազարեանի ձեռքը գտնուած կշիռը | 88 | 3 | — |
| Նուիրատուութիւնք Տնօրէն Խորհրդոյ ձեռամբ | 64 | 18 | 2 |
| Թռչակաւօր Գիշերօթիկներէ | 46 | — | — |
| » Երթեկներէ | 3 | — | — |
| Նուիրատուութիւնք Ե Մարտէյլ | 10 | 9 | 8 |
| » Ե Փարիզ | 145 | 14 | 6 |
| » Ե Լոնտոն | 20 | 5 | — |
| » Ե Մանչեսթըր | 197 | 5 | — |
| Թիֆլիսէն, Բարեսէր Ո՞՞՞ | 10 | — | — |
| Ս. Բեղրապուրկէն, Բժշկապետ Վահան, | 10 | 11 | 2 |
| Ս. Բեղրապուրկէն. Սքծ, Մեքսիկոյ վարդապետ Տէր Մովսէսեանի շնորհիւ: | 31 | 12 | 1 |
| Րոստովէն, Մեծ. Պ. Մինաս Բերբերեանի շնորհիւ, Րոստովի և Նոր Նախիջևանի բարեսէրներէն | 25 | — | — |
| Տոկոս, Գանձապահ Տխար Եղիազարեանէ | 23 | 11 | 1 |
| | 700 | 18 | 3 |
| ՊԱՀԵՍՏԻ ՀԱՇԻՒ | | | |
| Հատնախորդ Հաշուեկշռին, փոխադրեալ գումարը | 500 | — | — |
| Հատնախորդ Հաշուեկշռին, 28 Փետրուար 1903 ին Պա. հետի փոխադրեալ գումարը | 100 | — | — |
| | 600 | — | — |

ՎԵՅՆԵՐՈՐԴ ՏԱՐԵՇՐԶԱՆԻ

ՓԵՏՐՈՒՄ 1903

Ե Լ Գ

| | Ա. Ո. | ՇԵՆ. | ԲՆԵՒ |
|---|-------|------|------|
| Նուէր Տնուշ Տխար Վիւրքնանի | 50 | — | — |
| Տխար Վիւրքնանի վեց ամսուան օւղեւորութեան ծախսոց գումարը: | 112 | 1 | 7 |
| Կրթարան Որբանոցին միամեայ ծախքը, ըստ Տնօրէն Խորհրդոյ հաշուոյն | 301 | 10 | 7 |
| Մէկ անուկ թէյ | 2 | — | — |
| Թղթատարական և հեռագրական ծախք | 1 | — | — |
| Յարանի հաշուոյն, նախորդ Տեղեկագրի և սրիշ պէսքերու համար ծախսուած. | 10 | 4 | 6 |
| Վերաւար 23—1903, Տնօրէն Խորհրդոյ ձեռք գտնուած. | 36 | 13 | 5 |
| » Գանձապահ Տխար Եղիազարեանի ձեռք գտնուած կշիռը. | 87 | 8 | 2 |
| » Պահեստի հաշուոյն փոխադրուած գումարը. | 100 | — | — |
| | 700 | 18 | 3 |

« Ազգային գրադարան



NL0231557

43. 238